

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈԳԵԳԱԶԱՅԻՆ
ՑԻԿԼՈՎ (ՀՇԳՑ) ԷՆԵՐԳԱԲԼՈՎԻ
GT13E2 ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ ԿՈՄՊԼԵՍՈՐԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝

Ս. Խաչատրյան

Երևան-2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	3
1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.....	3
1.2. Տվյալներ ձեռնարկողի մասին.....	3
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ.....	4
2.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	4
2.2. Կլիմայական պայմանները	5
2.3. Օդային ավազան	7
2.4. Ջրային ռեսուրսներ	8
2.5. Հողածածկ	9
2.6. Կենսաբազմազանություն	10
2.7. Սոցիալական պայմանները	10
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ.....	12
3.1. Գործող ՇԳՑ էներգաբլոկի հակիրճ բնութագիրը	12
3.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների նկարագրությունը	14
3.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	16
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	16
4.1. Ռիսկերի գնահատում	16
Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր	17
ՕԳԱՏՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	19

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ GT13E2 գազատուրբինի կոմպրեսորի արդիականացում:

Նախաձեռնության նպատակն է բարձրացնել ներկայում շահագործվող համակցված գազատուրբինային էներգաբլոկի էներգաարդյունավետությունը և հուսալիությունը:

1.2. Տվյալներ ձեռնարկողի մասին

Սույն նախաձեռնության ձեռնարկող է հանդիսանում «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը:

«Երևանի ՋԷԿ» ձեռնարկությունը հիմնադրվել է 1963 թվականին: 1997 թվականին ստեղծվել է «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը:

Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի նախագծման աշխատանքները սկսվել են 1959 թվականին Խորհրդային Միության «Տեպլոէլեկտրոպրոյեկտ» ինստիտուտի կողմից: Երևանի ՋԷԿ-ի շինարարությունը սկսվել է 1961 թվականին: Երևանի ՋԷԿ-ն իրենից ներկայացնում էր 300 ՄՎտ հզորությամբ բլոկային մասից և 250 ՄՎտ էլեկտրական և 630 ԳԿալ/ժ ջերմային հզորությամբ ոչ բլոկային մասից բաղկացած խառը տիպի կայան՝ ունենալով ընդհանուր առմամբ 7 ագրեգատ 550 ՄՎտ էլեկտրական և 630 ԳԿալ/ժ ջերմային հզորություն:

Շահագործման մեջ լինելով ավելի քան 40 տարի՝ էլեկտրակայանի ագրեգատները և օժանդակ սարքավորումները ենթարկվել են ֆիզիկական և բարոյական էական մաշվածության՝ սպառելով իրենց աշխատանքային նորմատիվային պաշարները, որի հետևանքով բնականաբար զգալիորեն ընկել է կայանի շահագործման հուսալիությունը և էլեկտրական ու ջերմային էներգիայի արտադրության արդյունավետությունը:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ղեկավարությունը բնական գազի այրմամբ զերծամանակակից համակցված շոգեգազային ցիկլով աշխատող նոր էներգաբլոկի կառուցման միջոցով ձեռնամուխ են եղել Երևանի ՋԷԿ-ի վերակառուցման ծրագրի իրականացմանը: Այդ նպատակով 2005թ. մարտի 29-ին ՀՀ կառավարության և միջազգային համագործակցության ճապոնիայի բանկի (ՄՀՃԲ) միջև ստորագրվել է փոխառության համաձայնագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Երևանի ՀՇԳՑ էներգաբլոկի կառուցման աշխատանքները մեկնարկել են 2007թ.

դեկտեմբերի 21-ին GS Engineering & Construction Corp. կորեական և Mitsui & Co., LTD ճապոնական ընկերություններից կազմված կոնսորցիումի կողմից, տևել են 28 ամիս և 2010թ. ապրիլի 21-ին տեղի է ունեցել Երևանի ՀՇԳՑ էներգաբլոկի շահագործման հանձնման պաշտոնական արարողությունը:

Երևանի ՀՇԳՑ էներգաբլոկի դրվածքային ընդհանուր հզորությունը կազմում է 271.7 ՄՎտ, որից էլեկտրականը՝ 241 ՄՎտ, ջերմային հզորությունը՝ 434.9Գջ/ժ:

Ներդրվող նոր տեխնոլոգիաների շնորհիվ բարձրացել է կայանի ընդհանուր օգտակար գործողության գործակիցը՝ հասնելով մոտ 70 % -ի, շուրջ երկու անգամ նվազել է վառելիքի տեսակարար ծախսը, տասնյակ անգամ կրճատվել են ծծմբական թթվի և կաուստիկ սոդայի ծախսվող քանակները, զգալիորեն նվազել է արտանետումների մակարդակը:

Սակայն այս տարիների ընթացքում մշակվել և ներդրվել են նոր ավելի արդյունավետ տեխնոլոգիական լուծումներ և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ ձեռնարկել է ընթացիկ արդիականացում:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Երևանի ՋԷԿ-ի տարածքը գտնվում է քաղաքի հարավային մասում, արդյունաբերական շրջանում: Մոտակա բնակելի «Էրեբունի» և «Նորագավիթ» թաղամասերը գտնվում են ՋԷԿ-ից մոտ 2 – 2.5 կմ, իսկ Խարբերդի և Այնթապի բնակելի տները՝ 1.2 – 1.5 կմ հեռավորության վրա:

Տեղանքի ռելիեֆը հանգիստ է: Տեղանքի նիշը ծովի մակերևույթից 930 մ է:

Սեյսմակայնությունը – 8-9 բալ:

Պատմաճարտարապետական «Էրեբունի» թանգարանը գտնվում է տեղանքից ~4կմ հեռավորության վրա:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Գեոմորֆոլոգիա

Ներկայացվող տեղանքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ, որոշակի թեքությամբ ռելիեֆային բնույթ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից այրուվիալ-պրոյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով՝ ամուր կազմության, փթած բույսերի մնացորդներով և արմատներով:

2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

4. Վերին չորորդական լճա-այրուվիալ նստվածքներ, ներկայացված խճա-մանրախճային գրունտներով՝ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30 -35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Տարածքում սողանքային երևույթներ չեն դիտարկվել:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Գրունտային ջրերի առկայությունը կավային գրունտերում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայությամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի շրջանառության բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

ՀՀՇՆ II-6.02-2006 'Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր' նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտեվորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

2.2. Կլիմայական պայմանները

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+42^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները՝ ըստ ամիսների, Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար, բերված են աղյուսակ 4.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների

համաձայն:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.4	-0.9	5.3	12.4	17.4	21.6	25.5	25.2	20.5	13.5	6.5	-0.2	12.0

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը, ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների, բերված է աղյուսակ 4.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	60

Տեղումների բնութագիրը, ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների, բերված է աղյուսակ 4.3-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ²: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ մաքսիմալ օրական												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<u>24</u>	<u>26</u>	<u>32</u>	<u>43</u>	<u>52</u>	<u>27</u>	<u>13</u>	<u>10</u>	<u>13</u>	<u>26</u>	<u>28</u>	<u>22</u>	316
21	23	34	29	42	31	29	26	51	35	36	28	51

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնելիությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարին մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ²:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի

տվյալների բերված է աղյուսակ 4.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

ամիս	քամու կրկնելիությունն ըստ ուղղությունների և անդորրի, % քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	<u>3</u> 2.0	<u>10</u> 2.1	<u>13</u> 2.2	<u>16</u> 2.8	<u>20</u> 2.6	<u>26</u> 2.3	<u>9</u> 2.7	<u>3</u> 3.4	78
IV	<u>7</u> 3.1	<u>14</u> 2.9	<u>8</u> 2.4	<u>18</u> 3.5	<u>18</u> 3.0	<u>16</u> 3.0	<u>13</u> 4.1	<u>6</u> 3.4	50
VII	<u>17</u> 5.5	<u>31</u> 5.9	<u>3</u> 2.2	<u>9</u> 2.4	<u>16</u> 2.1	<u>13</u> 2.5	<u>7</u> 2.7	<u>4</u> 4.6	40
X	<u>5</u> 2.7	<u>18</u> 2.3	<u>10</u> 1.8	<u>11</u> 2.5	<u>19</u> 2.2	<u>22</u> 2.2	<u>10</u> 2.8	<u>5</u> 3.7	70

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 4.5 – 4.7 աղյուսակներում:

Արեգակնային ճառագայթում (Երևան)

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ ²												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	1068	1047	842	620	339	214	700

Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	2696

Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	39

2.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիթորինգ) կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42

շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2019թ. 1-ին եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 49177 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 1669 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1054 փորձանմուշ: Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

2.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիթորինգի կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Ըստ Էկոմոնիթորինգի 2019 թվականի տարեկան տեղեկանքի Հրազդան գետի ներքին հոսանքներում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս):

Ստորև բերված է Հրազդանի ջրավազանային տարածքի ֆոնային աղտոտվածության տվյալների աղյուսակը:

Աղյուսակ 2.8

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս

		(Դիտակետի համար)			
Հրագրան	Հրագրան	9 կմ Երևանից ներքև. գ.Դարբնիկի մոտ (55)	Երկաթ, նատրիում, քլորիդ իոն, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			ԹՔՊ, կոբալտ, կալիում, ԿՆ	4-րդ	
			Լուծված թթվածին, ԹԿՊ5, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
	Գետառ	Գետաբերան (59)	ԹԿՊ5, ԹՔՊ, նիտրատ իոն, մանգան, կոբալտ, նատրիում, սուլֆատ իոն	3-րդ	5-րդ
			Կալիում, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, վանադիում	5-րդ	

2.5. Հողածածկ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ավալիացած աղակալած:

Անմիջապես նախատեսվող տարածքում հողածածկը օգտագործվել է գործող ՋԷԿ-ի սպասարկման համար: Այստեղ գործնականում բացակայում է բերրի հողի շերտը և բուսածածկը:

Նախագծման փուլում /2017 աշուն – 2018 ձմեռ/, ծրագրի խորհրդատու Ֆիլսոներ ընկերության կողմից իրականացվել է հողի նմուշառում և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն”ի լաբորատորայում կատարվել են անալիզներ:

Անալիզների արդյունքները բերված են հավելվածների մասում:

2.6. Կենսաբազմազանություն

Ներկայացվող տեղանքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Այս տարածքում հանդիպող բուսականության տեսակներն են. Մատիտեղ /երկու տեսակ, որոնցից մեկի սերմերի պատիճը ուլունքաշար է, մյուսինը՝ փնջով լոբի/, ուղտափուշ պարսկական, երկտերև, օշինդր, Կապար փշոտ, Իշառվույտ, կովի առվույտ:

Այս տարածքում հացազգիներից գերակշռում է կծմախոտը, կա անապատային սեզ.

Նախատեսվող գարծունեությունը իրականացվելու է գործող ՋԷԿ-ի տարածքում, Երևանի արդյունաբերական գոտում, որը զուրկ է բնական բուսածածկից:

Կենդանիներից տեղանքում հանդիպում են ողնաշարավորներից, լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևաորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճոխիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանձեր:

Թռչուններ՝ կոնչան բադ, եղեգնահավ, լոր, թխակապույտ աղավնի, կտցարներ:

Անմիջապես ՋԷԿ-ի տարածքում չկա բնական բուսածածկ և չկան վայրի կենդանիներ:

2.7. Սոցիալական պայմանները

Երևանի ՋԷԿ-ը տեղակայված է Երևանի հարավային արդյունաբերական գոտու եզրամասում: Մոտակա բնակելի թաղամասերը՝ Նոր Խարբերդի, Այնթապի և Երևանի Էրեբունի վարչական տարածքի բնակելի շենքերը, գտնվում են 1.1 – 1.5 կմ հեռավորության վրա: Այդ համայնքները ՀՀ շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոնի կողմից ճանաչվել են ազդակիր և ստորև բերված են այդ համայնքների հիմնական սոցիալտնտեսական ցուցանիշները:

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից, Երևանի քաղաքապետարանի կայքից և Երևանի գլխավոր հատակագծից:

Աղյուսակ 2.9. Երևանի բնօրինակ ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 351.2 հա
3	այդ թվում՝ վարելահողեր	915.6 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը 2016թ. դրությամբ	1 073.7 հազ. մարդ

6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2016թ.	35.8 %
---	---	--------

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2017թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 2.10. Երևանի տնտեսության համամասնական տվյալներ

արդյունաբերություն	41.2%
գյուղատնտեսություն	1.1%,
շինարարություն	63.7%,
մանրածախ առևտուր	76.4%,
ծառայություններ	81.4%:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Աղյուսակ 2.11. Սոցիալական ցուցանիշներ

<i>Սոցիալական ցուցանիշը</i>	<i>Ընդամենը</i>	<i>Կանայք</i>	<i>Տղամարդիկ</i>
-----------------------------	-----------------	---------------	------------------

Զբաղվածներ, հազ. մարդ	294.3	144.3	160.0
Ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, հազ.մարդ	168.9	104.4	64.5
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	17076	-	-

Էրեբունի վարչական շրջանը գտնվում է Երևան քաղաքի հարավ-արևելյան մասում, շրջանի բնակչության թիվը՝ 126300 մարդ: Էրեբունի վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Կենտրոն, Նորք-Մարաշ, Նոր Նորք, Շենգավիթ և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի և Արարատի մարզերին:

Երևան քաղաքի շրջակա միջավայրի պահպանության համաքաղաքային լուծումներն անմիջականորեն կապված են Էրեբունի վարչական շրջանի և նրա շրջակա միջավայրի վիճակի բարելավման հետ:

Ընդհանուր առմամբ քաղաքի դիտարկվող վարչական շրջանում տեղ են գտել բազմազան հողօգտագործման ձևեր՝ բնակելի կառուցապատում, արդյունաբերական արտադրության համար նախատեսված գոտիներ, հատուկ նշանակության հողեր, հասարակական նշանակության կանաչ զանգվածներ, լանդշաֆտային գոտի, կոմերցիոն բնույթի օբյեկտներով կառուցապատված գոտի, բուժառողջարարական հաստատություններ, ուսումնական հատուկ նշանակության օբյեկտներ և այլն:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի շրջանակներում կատարված գնահատականների համաձայն, Էրեբունի վարչական շրջանը բնապահպանական առումով պատկանում է քաղաքի առավել աղտոտված շրջանների թվին:

Վարչական շրջանի մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներն են հանդիսանում առաջին հերթին տրանսպորտային միջոցները, արդյունաբերական օբյեկտները, որոնցից հիմնականներն են՝ Երևանի ջերմաէլեկտրակայանը, ֆեռոմոլիբդենի արտադրության և այլ գործարաններ, իրենց ներդրումը ունեն նաև հասարակական հատվածում գործող ջեռուցման կաթսայատները, գազաֆիկացված բնակելի տների (առանձնատների) և բազմաբնակարան տների ներշնչային ջեռուցման գազի կաթսաները և վառարանները:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

3.1. Գործող ՇԳՑ Էներգաբլոկի հակիրճ բնութագիրը

Երևանի Համակցված Շոգեգազային Ցիկլով Էներգաբլոկը կառուցվել է Ճապոնիայի կառավարության տրամադրած ODA վարկով, գործարկվել և մտցվել է առևտրային շահագործման մեջ 2010թ. ապրիլի 21-ին:

Էներգաբլոկի դրվածքային էլեկտրական հզորությունը (ծովի մակերևույթի վրա) կազմում է 241 ՄՎտ, ջերմային հզորությունը՝ ավելի քան 30 ՄՎտ:

Երևանի պայմաններում այն ապահովում է 205 ՄՎտ միջին էլեկտրական և մոտ 30 ՄՎտ ջերմային հզորություն:

Էներգաբլոկը ամենաարդյունավետն է տարածաշրջանում, ապահովում է 47,6% մաքուր էլեկտրական ՕԳԳ կամ 258,1 Գրամ/կՎտ·ժ պայմանական վառելիքի տեսակարար ծախս առաքված էլեկտրաէներգիայի վրա:

Ջերմային էներգիայի սպառման առկայության դեպքում օգտակար գործողության գործակիցը կարող է հասցվել մինչև 70,5 %-ի:

Էներգաբլոկի արտադրած էլեկտրական էներգիայի սակագինը 1,6-2,2 անգամ ցածր է Հայաստանի այլ ջերմաէլեկտրակայանների սակագներից ու կազմում է մոտ 29 Դրամ/կՎտ·ժ:

Երևանի ՀՇԳՑ էներգաբլոկի հիմնական սարքավորումների կազմը հետևյալն է՝ Գազատուրբին՝ GT13E2MXL տիպի, դրվածքային հզորությունը 179,9 ՄՎտ (ծովի մակերևույթի վրա), արտադրողը՝ Alstom, Շվեյցարիա:

Շոգետուրբին՝ էլեկտրական հզորությունը 63 ՄՎտ, արտադրողը՝ Fuji, Ճապոնիա:

HRSG - կաթսայական ագրեգատ, արտադրողը՝ NooterEricksen/Sedae, ԱՄՆ/Հարավային Կորեա:

Ավտոմատ կառավարման համակարգեր՝ արտադրողը Honeywell ընկերություն, ԱՄՆ:

Էներգաբլոկը 2010թ. ապրիլից մինչ այժմ աշխատում է շարունակական բեռի բազիսի ռեժիմում և կանգնեցվել է տարեկան մեկ անգամ արտադրողների կողմից սահմանված տարեկան նորոգումների նպատակով, այն են՝

A1 ինսպեկցիա՝ առաջին 9000 EOH պայմանական աշխատանքային ժամերի լրանալուց հետո, նորմատիվային ժամկետը՝ 7-10 օր,

A2 ինսպեկցիա՝ երկրորդ 9000EOH պայմանական աշխատանքային ժամերի լրանալուց հետո, նորմատիվային ժամկետը՝ 7-10 օր,


B1 ինսպեկցիա՝ երրորդ 9000EOH պայմանական աշխատանքային ժամերի լրանալուց հետո, նորմատիվային ժամկետը՝ 10-14 օր,

C1 ինսպեկցիա (կապիտալ նորոգում)՝ չորրորդ 9000EOH պայմանական աշխատանքային ժամերի լրանալուց հետո, նորմատիվային ժամկետը՝ 60 օր:

Վերոհիշյալ ժամանակահատվածները պայմանավորված են գազատուրբինի արտադրողի ստանդարտներով:

3.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների նկարագրությունը

Գործող GT13E2 գազատուրբինը համալրված է MXL տեսակի կոմպրեսորով:



Նկար 3.1. GT13E2 MXL գազատուրբինի ռոտորի ընդհանուր տեսքը

Ներկայում արդեն լայնորեն կիրառվում է հաջորդ սերնդի “MXL2 Upflow” կոմպրեսորը, որը իր տեխնոլոգիական ցուցանիշներով զգալիորեն գերազանցում է MXL տեսակի կոմպրեսորը:



Նկար 3.2. GT13E2 “MXL2 Upflow” գազատուրբինի ռոտորի ընդհանուր տեսքը

Փոխված և օպտիմիզացված են կոնֆիգուրացիան: Կիրառված են նորագույն պողպատներ և ջերմա/հրապաշտպանիչ մեկուսացնող նյութեր:

Կոմպրեսորի արդիականացումը նպատակաուղղված է արտադրողականության բարձրացմանը: Այդ բարձրացումը կկազմի 7 ՄՎտ և դա հնարավոր է դարձել ի հաշիվ հետևյալ փոփոխությունների.

- օդային զանգվածի ծավալը ավելացել է 8.5 մ³/վրկ` նախկին 385 մ³/վրկ մինչև 393.5 մ³/վրկ:

- փոփոխվել է առաջին և երկրորդ աստիճանի թիակների դիրքը և անկյան կարգաբերումը:



Փաստացի կատարվել է հզորության ավելացում առանց շահագործման ծախսերի ավելացման:

Արդիականացման արդյունքում նաև ձեռք են բերվել այլ առավելություններ.

- համատեղելի են բոլոր տեսակի այրիչների համար,
- համատեղելի են բոլոր մոդուլային ծրագրերի համար,
- հզորության ավելացում հասարակ ցիկլում (SC) 5 ՄՎտ և համակցված ցիկլում (CC) 6 ՄՎտ:

Արդիականացված կոմպրեսորի բնութագրերը հաշվարկված են հետևյալ պայմանների համար.

Շրջակա միջավայրի ջերմաստիճանը	12°C
Մթնոլորտային ճնշումը	0.912 բար
Շրջ. միջավայրի հարաբերական խոնավությունը	56 %
Ճնշման անկումը մուտքին`	10.1 մբար
Ճնշման անկումը ելքին`	27.0 մբար
Հզորության գործակից`	0.85
Շահագործման ռեժիմ`	XL

3.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Առաջարկվող արդիականացումը չի նախատեսում նյութերի կամ բնառեսուրսների փոփոխություն գործող ՋԷԿ-ում: Մի փոքր միայն կավելանա օգտագործվող օդի ծավալը՝ 385.0 մ³/վրկ մինչև 393.5 մ³/վրկ:

Արդիականացման աշխատանքների ընթացքում նույնպես չի նախատեսվում բնառեսուրսների օգտագործում:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

**ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ
ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ**

4.1. Ռիսկերի գնահատում

Երևանի ՋԷԿ» ՓԲԸ GT13E2 գազատուրբինի կոմպրեսորի արդիականացման ժամանակ բնապահպանական ռիսկերը հիմնականում կապված են մոնտաժային աշխատանքների հետ, որոնցից հիմնականներն են.

- մոնտաժային աշխատանքների արդյուքում առաջացող աղմուկ,
- տեխնիկական միջոցների շահագործման ժամանակ օգտագործվող վառելիքի այրման արգասիքները,
- արտադրական անվտանգության հետ կապված խնդիրներ:

Թեկուզ թվարկված գործընթացների ազդեցությունը էական չէ, այնուամենայնիվ դրանք նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով հիմնական գնահատման փուլում կմշակվեն բնապահպանական, սոցիալական միջոցառումներ և բնապայպանական կառավարման պլան: Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգի գործողություններ, որոնք ներկայացված են աղյուսակի տեսքով:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Միջոցառումների պատասխանատուն</i>	<i>Մոնիթորինգի միջոցառումներ</i>	<i>Մոնիթորինգի պատասխանատուն</i>
Նախապատրաստական աշխատանքներ	<p>ա/ մթնոլորտային օդի աղտոտում տրանսպորտային միջոցների վառելիքի այրման արդյունքում</p> <p>բ/Աղմուկ տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում</p> <p>գ/Հողերի աղբոտում և աղտոտում դիզ. վառելիքի և յուղերի արտահոսքից</p> <p>դ/ Երթևեկության ինտենսիվացում</p> <p>զ/ արտադրական անվտանգության խնդիրներ</p>	<p>Պարբերաբար պետք է կարգաբերվեն տեխնիկատրանսպորտային միջոցների շարժիչները, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վերանորոմ</p> <p>Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում`</p> <p>Վառելիքը և քսայուղերը պահպանել այնպիսի պահեստներում, որ բացառվի դրանց տարածումը անձրևաջրերի հետ</p> <p>Պետք է մշակվի երթևեկության ժամանակացույց</p> <p>Աշխատանքի վայրերում տեղադրել նախազգուշացնող ցուցանակներ</p>	<p>Մոնտաժային կապալառու</p> <p>Մոնտաժային կապալառու</p> <p>Մոնտաժային կապալառու</p> <p>Մոնտաժային կապալառու</p> <p>Մոնտաժային կապալառու</p>	<p>Պարբերաբար պետք է ստուգվեն տրանսպորտային միջոցների շարժիչները</p>	<p>Մոնտաժային կապալառու, “Երևանի ՋԷԿ” ՓԲԸ</p> <p>Մոնտաժային կապալառու, “Երևանի ՋԷԿ” ՓԲԸ</p> <p>Մոնտաժային կապալառու, “Երևանի ՋԷԿ” ՓԲԸ</p> <p>Մոնտաժային կապալառու, “Երևանի ՋԷԿ” ՓԲԸ</p> <p>“Երևանի ՋԷԿ” ՓԲԸ</p>

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Միջոցառումների պատասխանատուն</i>	<i>Մոնիթորինգի միջոցառումներ</i>	<i>Մոնիթորինգի պատասխանատուն</i>
Մոնտաժային աշխատանքներ	<p>ա/ Տարածքի աղբոտում մոնտաժային սարքավորումներով</p> <p>գ/ Աշխատանքի անվտանգություն, աշխատանքային պայմաններ</p>	<p>Բոլոր ապամոնտաժված դետալները պահեստավորել հատուկ հատկացված սենյակներում, տեսակավորել և տրամադրել համապատասխան լիցենզավորված ընկերությունների հետագա վերամշակման կամ վնասազերծման համար</p> <p>Աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով:</p> <p>Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:</p> <p>Բարձր լարման տեղամասերում պետք է տեղադրվեն նախազգուշացնող վահանակներ</p>	<p>Մոնտաժային կապալառու</p> <p>Մոնտաժային կապալառու</p> <p>Մոնտաժային կապալառու, “Երևանի ՋԷԿ” ՓԲԸ</p> <p>Մոնտաժային կապալառու, “Երևանի ՋԷԿ” ՓԲԸ</p>	<p>ՋԷԿ-ի տարածքի և գազատուրբինային տեղամասի արտաքին զննում</p> <p>Աշխատանքային տեղամասերի պարեբարական ստուգումներ, այցեր</p>	<p>“Երևանի ՋԷԿ” ՓԲԸ</p> <p>“Երևանի ՋԷԿ” ՓԲԸ</p>

ՕԳԱՏՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


- ՀՀ կառավարություն, 2009, No 363-Ն որոշում «Էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»
- ՀՀ բնապահպանության նախարարություն, (2014): Չորրորդ Ազգային հաղորդագրություն: <http://www.cbd.int/doc/world/am/am-nr-05-en.pdf>
- Ազգային Ատլաս, Երևան, 2007
- ՀՀ Արարատի մարզի Այնթապի գյուղական համայնքի /բնակավայրի/ պարզեցված գլխավոր հատակագիծ
- High Voltage Electric Networks. Electricity Transmission Network Improvement Project. Rehabilitation of the Substation of Yerevan Thermal Power Centre. Environmental Management Plan. FICHTNER GmbH & Co



УСТАНОВКА

№ п/п	ОБЪЕКТ	СЛУЖЕБНОЕ
1	Установка СВЧ - ДЦ	
2	Назначение пункта для размещения объектов СВЧ	
3	Зона обслуживания СВЧ - ДЦ	
4	Установка СВЧ	
5	Установка СВЧ - ДЦ	
6	Установка СВЧ - ДЦ	
7	Установка СВЧ - ДЦ	
8	Установка СВЧ - ДЦ	
9	Установка СВЧ - ДЦ	
10	Установка СВЧ - ДЦ	

		1:500 - 2000	
		УСТАНОВКА СВЧ - ДЦ	
		УСТАНОВКА СВЧ - ДЦ	
№ п/п	Наименование объекта	Служба	Дата
1	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957
2	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957
3	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957
4	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957
5	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957
6	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957
7	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957
8	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957
9	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957
10	Установка СВЧ - ДЦ	СВЧ	1957



ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Համակցված շոգեգազային ցիկլով (ՀՇԳՑ) էներգաբլոկի «GT13E2» գազատուրբինի կոմպրեսորի արդիականացման» նախնական գնահատման հայտի վերաբերյալ դիտողությունների և պարզաբանումների

N	Դիտողություն կամ առաջարկություն	Պարզաբանում
1	<p>իրադրության սխեմա համապատասխան նշագրումներով (գործող ՋԷԿ, հեռավորությունը մոտակա բնակելի կառուցապատված և արտադրական տարածքներից, հանրային օբյեկտներից և գոյություն ունեցող ենթակառուցվածքներից՝ նշելով սանիտարապաշտպանիչ գոտու սահմանները),</p>	<p>Իրադրային սխեման կցված է թղթային տարբերակին</p>
2	<p>ներդրվող նոր տեխնոլոգիաների /կոմպրեսորի արդիականացում/ արդյունքում, Երևանի ՀՇԳՑ էներգաբլոկի տեխնիկական ցուցանիշների, ինչպես նաև վառելիքի տեսակարար ծախսի և արտանետումների մակարդակի /ագոտի օքսիդներ՝ (NOx) ածխաթթու գազ՝ (CO2), ածխածնի օքսիդ (CO)/ վերաբերյալ տեղեկատվություն և առկա վիճակի հետ համեմատական վերլուծություն,</p>	<p>Փոփոխվող տեխնոլոգիական ցուցանիշները հստակորեն ներկայացված են 3.2. բաժնում: Մնացած պահանջվող տվյալները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում</p>
	<p>նոր տեխնոլոգիայի օգտագործման դեպքում արտադրական նպատակով պահանջվող ջրի ծախսի վերաբերյալ տեղեկատվություն և ներկա ջրապահանջի հետ համեմատական վերլուծություն,</p>	<p>Վերազինման ընթացքում և հետո ջրօգտագործման և ջրհեռացման ծավալների փոփոխություն չի նախատեսվում:</p>

	կոմպրեսորի արդիականացման համար օգտագործվող օդի աղբյուրի և ծավալի վերաբերյալ տեղեկատվություն,	կոմպրեսորի արդիականացման համար օգտագործվող օդի աղբյուրը նույնն է՝ մթնոլորտային օդը, ծավալի փոփոխությունը ներկայացվել է 3.2. բաժնում
	մոնտաժային աշխատանքների արդյուքում առաջացող թափոնների հեռացման լուծումների և վայրերի վերաբերյալ տեղեկատվություն,	Պահանջվող տվյալները առկա բնապահպանական կառավարման պլանում
	բնապահպանական միջոցառումների լրամշակված ծրագիր, ներառելով նաև հնարավոր արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, նվազեցման միջոցառումները և ՀՇԳՑ էներգաբլոկի շահագործման փուլը /վերջիններս ներառել նաև «բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագրում»/:	Նախնական գնահատման համար բոլոր անհրաժեշտ ներկայացված են, շահագործման փուլում որևէ փոփոխություն չի նախատեսվում և նոր միջոցառումների կարիք չկա, արտակարգ իրավիճակները չեն հանդիսանում ՆԳՀ առարկա /տես ՇՄԱԳՓ մասին ՀՀ օրենքի 16-րդ և 18-րդ հոդվածներ/
	էջ 13 և էջ 4-ում Երևանի ՀՇԳՑ էներգաբլոկի տեխնիկական ցուցանիշների վերաբերյալ տարբեր տեղեկատվությունը /դրվածքային ընդհանուր հզորություն, ջերմային հզորությունը և այլն/,	Տարբերությունը /241 և 242 ՄՎտ/ կապված է թվերի կլորացման հետ, որը շտկվել է
	էջ 5-ում «ցիրկուլիացիա» բառն անհրաժեշտ է փոխարինել շրջանառություն բառով,	Փոխարինվել է
	էջ 3-ում «ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը» փոխել՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության,	2005 թվականին «ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը» եղել առանձին և չի եղել տարածքային նախարարության կազմում
	«Նյութերի և բնառեսուրսների օգտագործում» բաժնում ավելացնել կոմպրեսորի համար օդի	Ներկայացվել է 3.2. բաժնում

	օգտագործման տեղեկատվությունը:	վերաբերյալ
--	----------------------------------	------------